

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԻՌԻՍԱՍՏԱՆՈՒՄ

Գ. Տ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

17-րդ դարի սկզբին Ռուսաստանում ձևավորված հայկական գաղութն այնքան էր աճել, որ արդեն 1718 թ. Գանձասարի կաթողիկոս Ծսայի Հասան-Ջալալյանը ստեղծեց ռուսահայոց թեմը: Հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս, էջմիածնի բարեկարգիչ և հոգևոր, գործերի նվիրյալ Սիմեոն Երևանցին (1763—1780), ի թիվս այլոց, ձգտում էր ուժեղացնել նաև ռուսահայ հոգևոր թեմը:

1766 թվականին էջմիածնում գումարվում է եպիսկոպոսական ժողով, որտեղ որոշվում է հատուկ կոնդակով խնդրել Ռուսաստանի ինքնակալ Ծկատերինա II-ին լուծելու այս հարցը: 1768 թվականի հուլիսի 30-ի հրամանագրով կայսրուհին ճանաչում է էջմիածնի իրավունքները ռուսահայերի նկատմամբ և միաժամանակ խոստանում հետևել իր մեծ նախնու՝ Պետրոս I-ի օրինակին և հովանավորել հայերին¹: Սրան հետևում է երիտասարդ արքեպիսկոպոսի՝ Հովսեփ ԱրղուՅյանի ռուսահայոց հոգևոր առաջնորդ նշանակվելը:

Ինչպես պարզվեց հետագայում, Սիմեոն Երևանցին ավելի լավ ընտրություն չէր կարող կատարել: Որպես ռուսահայերի հոգևոր հովիվ, արքեպիսկոպոսի նստավայրը պետք է լիներ Աստրախանը, որ այն ժամանակ հայկական ամենամեծ գաղութն էր Ռուսաստանում²: Բայց Հովսեփ ԱրղուՅյանը շնչաց այստեղ և շահմանափակվեց զուտ հոգևոր գործերով:

Ռուսաստանում ԱրղուՅյանը մտերմանում է Հովհաննես Լազարյանին, որն արդյունաբերող ազնվական լինելուց բացի, հայերի ազատագրական շարժման գործիչներից էր և մշակույթի մեծ հովանավոր: Լազարյանի շնորհիվ ԱրղուՅյանը շատ արագ մտերմանում է կառավարող շրջանների՝ մասնավորապես իշխան Գ. Ա. Պոսոյմկինի հետ, օրի ձեռքին էին կենտրոնացված հզոր պետության կառավարման կարևոր լծակները:

Ահա այսպիսին էր իրադրությունը, երբ 18-րդ դարի վերջին քառորդում Ռուսաստանում հիմնադրվեց առաջին հայկական տպարանը: 1770-ական թվականներին Ջուղայեցի վաճառական Խոջամալի որդի Գրիգոր Խալիլարյանը «վասն հարկաւորութեան» Հնդկաստանից մեկնում է Անգլիա³: Այստեղ նա մնում է 10 տարի և այլ գործերի հետ միաժամանակ որոնում մի արհեստավոր, որը կկարողանար փորագրել հայկական տպագրական տառեր: Չնայած Լոնդոնում կային բազմաթիվ փորագրիչներ, բայց նրանք «ոչ կամէին շինել և տալ ինձ պողպատեայ տառսն և ոչ զմայր տառիցն, այլ միայն զկապարեայսն», որոնցով հնարավոր չէր գրատպություն կատարել: Վերջապես գտնվում է մի անգլիացի փորագրիչ-վարպետ, որը հանձն է առնում Խալիլարյանի համար պատրաստել երեք տեսակի տառեր:

Տառերը ստանալուց հետո «հարկ եղև մեզ վերստին դառնալ ի երկիրն Ռուստաց», ուր արժանանում է Հովսեփ ԱրղուՅյանի ընդունելությանը, որը տեսնելով «զնորակազմ տիպս մեր» շատ է ուրախանում և պատվիրում տպագրել փոքրիկ այբրենարան:

Խալիլարյանը Լոնդոնյան գործունեության մասին ուրիշ ոչինչ չի գրել: Հայտնի են նրա Լոնդոնյան տպագրությունները, որոնցից մեկը՝ «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց» հայերեն-լատիներեն, և Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» հայերեն-լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով գիրքն է՝, տպագրված Ջոն Ռիվինգտոնի տպարանում 1780-ին: Երկրորդը 1781 թ. մեկ էջի վրա տպագրված «Պաղատանք առ Միածին Որդին Աստուծոյ» աղոթքն է, որում կարդում ենք. «Տպագրեալ յամի Տեառն 1781: Ի Յուճիս 30: Ի Լոնդոնոն: Տպիւք Գրիգորի որդոյ Խոջամալի Ջուղայեցոյ՝ Խալիլարեանց կո-

¹ Տե՛ս, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1894, էջ 21Թ:

² Տե՛ս Աօ, Յովսէփ կաթողիկոս ԱրղուՅեան, Թիֆլիս, 1902, էջ 39:

³ Տե՛ս «Ժամագիրք», Պետերբուրգ, տպ. Գ. Խալիլարյանի, 1783, Յիշատակարան:

⁴ Տե՛ս «Ազգային գրադարան», թիվ 395, 569:

չեցելոյ որոյ ծախիւթն և աշխատութեամբ իսկ փորագրեալ եղև նորակազմ տիպս»⁵: Իր հետ վերցնելով պատրաստված երեք տեսակի փորագրի տառերը՝ Խալդարյանը գալիս է Պետերբուրգ, ձևք բերում տպագրական հաստոցներ և տպարանը տեղադրելով Հովհաննես Լազարյանի՝ Պետերբուրգի տանը (Նևսկի պողոտա)՝ սկսում է տպագրական գործունեությունը: Այսպես շուգայեցի Գրիգոր Խալդարյանի ջանքերով և Հովսեփ Արղուժյանի հովանավորութեամբ հիմնադրվում է հայկական առաջին տպարանը Ռուսաստանում:

Գրիգոր Խալդարյանը տպագրութեան մեջ պատահական մարդ չէր, այլ այս գործին նշանակալից էր, իր գործի նշանակությունը հասկացող մտավորական: Խալդարյանի հեղինակած և լույս իր մահվանից հետո տպագրված «Գիրք, որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան»⁶ հայտնաբերման բառարանի տիտղոսաթերթին նրա մասին գրել են՝ «փոխագրեալ ի հայկական լեզուէ ի յըռուսաց պանծալի բարբառ, ի նոր Զուգայու ի Քրիստոս հանգուցեալ՝ ազնիւ Խալդարեան տոհմէ յառաջասերեալ ի բանասէր և ի գիտնական լուսաւորեալ հոգի պարոն Գրիգորէ»: Բացի սրանից Խալդարյանը, լինելով բավականաչափ «գրոց մարդ»⁷, առաերն է թարգմանել ներսես Շնորհալու 24 աղոթքները⁸: Ուրեմն Պետերբուրգում առաջին հայկական տպարանը հիմնադրել է մի մարդ, որը տոգորված էր ազգի լուսավորութեանը ծառայելու ոգով և այդ գործին նվիրեց ոչ միայն իր ամբողջ նյութական, այլև հոգեկան կարողությունը:

Խալդարյանի տպարանը Պետերբուրգում գործեց շուրջ ութ տարի (1781—88 թթ.) և այդ տարիներին հայ ընթերցողներին պարգևեց 21 անուն գիրք: Այս գրքերի մի մասը (11 անուն) կրոնական բնույթի են, որոնց կարիքը այն ժամանակներում շատ մեծ էր, և Հայոց կաթողիկոսը հաճախ էր պատվիրում Արղուժյանի միջոցով տպագրել այս կամ այն գիրքը եկեղեցիների և դպրոցների աշակերտներին համար: Օրինակ՝ «Ժամագրքի»⁹ տպագրութեան մասին Ղուկաս կաթողիկոսը (1780—99) գրել է. «... ի նորատիպ գրեանցը հարկաւորագոյն է սրբոյ տանս ժամագիրքն, զի հինքն սպառեալ են, և զնորս ի տպագրելոց աշխարհականացն Պալաւ ոչ ախորժիմք բերել տալ, այլ գրեմք հոգեւոր որդւոյդ, զի ի քո տպեցելոցն՝ Ս կամ Լ հատ անյապաղ յղեցես ի պէտս դպրատան տղայոցն և այլոց ընթեռնելոյ»¹⁰:

Խալդարյանը տպագրում էր նաև աշխարհիկ բովանդակութեամբ գրքեր: Վերը նշված աշխարհիկ գրքերի մեջ հատկապես ուշագրավ են «Այբբենարանը» (1781 թ.), Աննա Դիլանշյանի թարգմանած «Սկզբունք քաղաքական ուսմանցը» (1785 թ.), ներսես Շնորհալու «Յիսուս Որդին» (1785 թ.), Նիդշիի պատմագիրքը (1787 թ.), Խալդարյանի «Շաւիղ լեզուագիտութեանը» (1788 թ.), Կիոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան» (1788 թ.) և այլն: Գրքեր, որ նախանշված էին «առ ի տալ առիթ սիրոյ երկոցունցս ազգաց շաղկապման եկեղեցականց և համայն լուսաւորեալ մանկանց եկեղեցւոյ»¹¹:

Ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս առաջին դժվարությունները: Վերը նշված Այբբենարանի տպագրությունից հետո Խալդարյանին պարզ է դառնում, որ Անգլիայից բերված տառերը բավարար չեն տպագրական գործը ամուր հիմքերի վրա դնելու համար, ուստի նա Լոնդոնից կանչում է իր ծանոթ փորագրիչին և տեղում պատրաստել և նորս նորերը: Արդեն 1782 թ. լույս տեսած «Կրթութեան քրիստոնէականը» տպագրվում է նոր տառերով: Սակայն իրական դժվարություններ դեռ առկում էին: Արդեն 1786—87 թթ. Խալդարյանը ընկել էր մեծ պարտքերի տակ, որի մասին տեղյակ է պահում իր հովանավորին՝ Հովսեփ արք. Արղուժյանին: Վերջինս Խալդարյանին օգնելու նպատակով առաջարկում է տպարանը տեղափոխել նոր Նախիջևն, ուր արդեն կառուցել էր սբ. Խաչ վանքը, որին կից շուտով գործելու էր նաև դպրոց: Խալդարյանը համաձայնում է և պատրաստվում տեղափոխությանը¹², երբ վրա է հասնում անժամանակ մահը՝ 1787 թվականի օգոստոսի 8-ին, կիսատ թողնելով Նիդշիի «Պատմութիւն Վարդանանց» գրքի տպագրությունը: Վերջինիս տպագրությունը ավարտում է նրա «հոգեծին և սիրելի որդին և ձեռնասուն աշակերտը»՝ Մկրտում Աստվածատրյանը, որը փոքր տարիքից աշխատում էր տպարանում՝ տառեր շարելու, ցրելու և այլ աշխատանքներ կատարում: Ստանալով Խալդարյանի մահվան լուրը՝ Արղուժյանը 1788 թ. փետրվարի 2-ին Պետերբուրգ է ուղարկում Կ. պոլսեցի Թադեոս վ. Մարուգյանին՝ թափուր

⁵ Տե՛ս Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 6498-ին կից:

⁶ Գրիգոր Խալդարեան, Գիրք որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան, Պետերբուրգ, 1788:

⁷ Գ. Անգլյան, Հայ տպագրական արվեստը, Երևան, 1946, էջ 166:

⁸ Տե՛ս Գրիգոր Խալդարյան, Շաւիղ լեզուագիտութեան:

⁹ Տե՛ս Ժամագիրք, Պետերբուրգ, տպ. Գ. Խալդարեանի, 1783, Յիշատակարան:

¹⁰ Դիւսն հայոց պատմութեան, Գիրք Բ, Յովսէփ կաթողիկոս Արղուժեան, մասն առաջին, 1778—1800, Թիֆլիս, 1911, էջ 162:

¹¹ Տե՛ս Գրիգոր Խալդարեանց, Գիրք որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան, Յիշատակարան:

¹² Տե՛ս ներսես Շնորհալի, Թուղթ Հնդհանրական, Պետերբուրգ, տպ. Գ. Խալդարեանի, 1788, Յիշատակարան, էջ 317—336:

մնացած տպարանին տիրություն անելու և, պարտքերը վճարելով, տպարանը նոր նախիջևան տեղափոխելու համար: Խաղաղարյանի կինը՝ Կատարինն Ջաբարովան, Թաղևոս Մարուզյանին է հանձնարարում ամուսնու հեղինակած «Շաւիղ լեզուագիտութեան» գրքի տպագրութեան ավարտումը՝ շխնայելով գրամական միջոցներ, քանզի հասկանում էր, որ «աշխատանք լուսահոգւոյն լինելոց է յարգանս ընկալեալ՝ առաւել քան գուկի և քան զականս պատուականս՝ ի յուսումնասէր մերազնացն»¹³: Գրքի վերջում Շնորհալու աղոթքներն են՝ ուսերեն թարգմանութեամբ, որ կատարել է Խաղաղարյանը, և, ինչպես ասվեց վերևում, մեկ անգամ արդեն տպագրվել էին:

Թաղևոս վարդապետը վճարում է 12000 ուրլի և գնում իննը տեսակի հայերեն և երկու տեսակի ռուսերեն տառատեսակները, հաստոցներն ու սարքերը և տպարանը տեղափոխում նոր նախիջևան: Մնացած պարտքերի համար Թաղևոսը պարտավորակ է տալիս Կատարինն Ջաբարովային:

Այսպիսով 1781—88 թթ. Խաղաղարյանի հիմնած տպարանում լույս տեսած 16 անուն գրքերը կարողացան ինչ-որ չափով ծածկել այն բացը, որ կար գրականութեան գործում: Զէ՞ որ մայր հայրենիքում տպագրութեանը սկսվել էր Խաղաղարյանից լով 10 տարի առաջ (1771 թ. էջմիածին): Խաղաղարյանի լույս ընծայած գրքերը առաջընթաց էին պայմանավորում ոչ միայն աշխարհիկ բովանդակությամբ գրքերի, այլ հենց կրոնական գրքերի տպագրության մեջ: Վերևում հիշատակված «Ժամագրքից» բացի, այս 8 տարիների ընթացքում տպագրվում են «Աևետարան ճաշու», «Յիսուս Որդի» և այլ գրքեր, որոնք բնականաբար անհրաժեշտ էին ոչ միայն Արղուժյանի թեմի հավատացյալ ժողովրդին:

Դիտարկվող ժամանակաշրջանում քաղաքական այլևայլ պարագաների թելադրանքով Ղրիմի հայ բնակչությունը ստիպված էր հեռանալ դեպի Դոնի տափաստանները: Սակայն վերաբնակեցման երկից շատերը Ղրիմի գեղատեսիլ և զովաշունչ վայրերից հեռոտ չէին կարողանում հաշտվել և ցանկանում էին վերադառնալ: Ի միջիթարանք գաղթականների, Հովսեփ արք. Արղուժյանը կառուցում է մի վանք, որ պիտի կոչվեր Ղրիմի մյուս հայկական սրբավայրի պես՝ ս. Խաչ: Նորակառույց վանքի օծումը Արղուժյանը կատարում է 1792 թ. նոյեմբերի 27-ին¹⁴: Սակայն եթե Ղրիմի ս. Խաչ վանքը սոսկ ուխտատեղի էր, ապա այս նորակառույցը, սրբավայր լինելով հանդերձ, դառնալու էր նաև մշակութային կենտրոն: Հենց այս վանքում իր նոր հանգրվանը գտավ Գ. Խաղաղարյանի տպարանը: Տպարանից բացի այստեղ բացվում է նաև դպրոց: Ինքը՝ Արղուժյանը, չէր պատկերացնում դպրոցի և տպարանի անջատ գործունեությունը: Դրա վկայությունն է նաև վանքի շինարարության արձանագրությունը՝ «Եւ հաստատեցի ի սմա զդպրոցս և զտպարանս»: Վաստակաշատ արքեպիսկոպոսը շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար դիմում է մեծահարուստ հայերին և հանգանակության միջոցով վերջացնում կարևոր մշակութալուսավորական կենտրոնի կառուցումը: Արղուժյանին օժանդակում էին ոչ միայն Ռուսաստանի, այլ անգամ հեռավոր Հնդկաստանի մեծահարուստները: Արղուժյանը լավ էր գիտակցում դպրոցի և տպարանի միատեղ գործունեության կարևորությունը, նա գրում էր. «Որպէսզի դպրատունն այն զմանկունս ի կատարելութիւն իմաստութեան աճմամբ, յարտաքին գիտութիւնս կրթեալ, տպագրատունն օգնեցի»¹⁵: Այսպիսով 1790 թ. սկսում է Խաղաղարյանի հիմնադրած տպարանի գործունեության երկրորդ շրջանը՝ նոր նախիջևանի ս. Խաչ վանքում: Տպարանի աշխատանքների վերակացու է կարգվում Թաղևոս Մարուզյանը՝ «ըստ հայկական լեզուի», իսկ ռուսերենի համար՝ «այլ ոմն ռուս հանձարեղ»¹⁶:

Այս տարիներին Ռուսաստան է գալիս Զմյուռնիայում ուսանած Մարգար Խոջենց Երկվանցին, որը տիրապետում էր իտալերենին, պարսկերենին, արաբերենին և իսկույն ընդգրկվում է տպագրական աշխատանքների մեջ: Վերջինս, դեռևս Զմյուռնիայում լսելով Հովսեփ Արղուժյանի ծավալած մշակութային և լուսավորական շարժման մասին, գալիս է Ռուսաստան և արքեպիսկոպոսին ներկայացնում Չրանչեսկո Ֆենելոնի նշանավոր «Տելեմաքի» իր թարգմանությունը: Շեշտելով, որ ի տարբերություն մյուս ազգերի, հայերը դեռևս չունեն «Տելեմաքի» թարգմանությունը, Մարգար Երևանցին այն ֆրանսերենից թարգմանում է իտալերեն, ապա հայերեն: Թարգմանությունը սրբագրում է Բ. Մարուզյանը: 1793 թ. այս գիրքը տպագրվում է երկու անգամ: Առաջինը՝ 800 օրինակ, Օճանչան Գերաթյանի ծախսով, իսկ երկրորդը՝ 500 օրինակ՝ Ն Օճանչան Եղիազարյանի ծախսով: Գրքերն իրարից տարբերվում են միայն հիշատակարանով: Ֆենելոնի «Տելեմաքը» ս. Խաչ վանքի տպարանում լույս է տեսնում ևս մեկ անգամ՝ առաջին հատորը 1794-ին, իսկ երկրորդը 1795 թվականին: Գրքի այս-

¹³ Անդ:

¹⁴ Ե. Շահագիր, Նոր նախիջևանի ս. Խաչ վանքը, Քիֆլիս, 1901, էջ 1:

¹⁵ ՄԱՄ, Ա. Երիցյանի արխիվ, թ. 103, վավ. 8:

¹⁶ Դիան հայոց պատմութեան, էջ 102:

¹⁷ Տե՛ս Ազգային գրադարան, ԱՏ, թ. 3770:

պեն հաճախակի տպագրումը խոսում է աշխարհիկ ընթերցանության գրքերի տպագրության պակասի և մեծ պահանջարկի մասին: Այս հրատարակությունը կարևորվեց նաև նրանով, որ «Տելեմաքը» առաջին անգամ էր հրամցվում հայ ընթերցողին: Ընթերցանության այս կարգի գրքերն իսկույն սպառվում էին: 1792 թ. երկու անգամ տպագրվում է Հովհաննես Երզնկացու «Վիպասանութիւն գերկնային մարմնոց շարժմանէ» աշխատությունը: Ս. Խաչ վանքի լավագույն հրատարակություններից է նաև Պետրոս Քալանթարյանի «Համառոտ բժշկարանը» (1793 թ.): Բժիշկ Պ. Քալանթարյանն այս աշխատությունը հեղինակել է Մոսկվայում 1789 թվականին: Ձևագիրը սրբագրել է Թադևոս վարդապետը: Գիրքը բաղկացած է համառոտ բժշկարանից, որի 20 պրակներում հեղինակը տալիս է ժամանակի տարածված տարբեր հիվանդությունների բուժումը, ղեղատոմսեր, և ունի համառոտ բառարան՝ «Անուան դեղորից, որ ի լատին բարբառ, և ի հայ գիր, ի յառաջին մասին գրեցեալ, զնոյն և աստանոր՝ այրբենական կարգիւ շարադասութիւնամբ...»¹⁸:

Նոր նախիջևանյան հրատարակությունների մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև 1792 թ. տպագրված Հովսեփ Արղուժյանի «Դուռն Ողորմութեան» գիրքը, որտեղ նկարագրված է նոր նախիջևանի և Գրիգորիոպոլսի կառուցման պատմությունը: Աշխարհիկ բնույթի գրքերի կողքին, բնականաբար, տպագրվում էին կրոնական գրքեր, որոնցից հիշատակման է արժանի եկեղեցական օրացույցը (1792), որը 18-րդ դարում մեծ ժողովրդականություն էր վայելում: Բացի սրանից դա օրացույցի տպագրության առաջին փորձն էր Ռուսաստանում:

Խաղարյանի տպարանը նոր նախիջևանում գտնվելու տարիներին բազմաշխատ արքեպիսկոպոսը հաճախ էր բացակայում այս նորակառույց բաղաբոցի: Եվ նրան պարզ է դառնում մի հանգամանք՝ Արղուժյանի բացակայության ժամանակ տպարանի աշխատանքները կանգ էին առնում, և հակառակը՝ տպագրությունը կարծես վերակենդանանում էր, երբ արքեպիսկոպոսը նոր նախիջևանում էր: Եվ որպեսզի կարողանա մշտապես ուշադրության կենտրոնում պահել տպարանի գործունեությունը, Հովսեփ Արղուժյանը այն տեղափոխում է Աստրախան:

Այսպիսով նոր նախիջևանում խաղարյանի տպարանը գործեց 6 տարի (1789—95) և այդ տարիների ընթացքում կարողացավ տպագրել 21 անուն գիրք, որոնցից շատերը առաջին անգամ էին լույս ընծայվում հայերեն:

Աստրախանը որպես ժամանակի ամենամեծ գաղթօջախ նաև ռուսահայոց թեմի առաջնորդի նստավայրն էր: Ահա թե ինչու Հովսեփ Արղուժյանը ցանկացավ խաղարյանի տպարանը նոր նախիջևանից տեղափոխել այստեղ: Աստրախանում արդեն տպարանը կոչվում էր իր մեծ երախտավորի՝ Հովսեփ Արղուժյանի անունով: Աստրախան տեղափոխվելուց հետո Արղուժյանը տպարանի համար կարողացավ հովանավորներ և աշխատողներ գտնել, և որից հետո էլ տպագրական աշխատանքները շարունակվեցին: Աստրախանում առաջինը տպագրվում է (1796 թվականին) Եկատերինա 2-ի հրովարտակը՝ «Յաղագս պատերազմին ընդդէմ Պարսից»: Սակայն Գրիգոր Խաղարյանի հիմնած տպարանը այստեղ այնքան էլ բեղուն գործունեություն չունեցավ. այն Աստրախանում գործեց մինչև 1800 թվականը և տպագրեց 8 անուն գիրք, որոնցից են «Ժամագիրք», Հովսեփ Արղուժյանի «Խօսք ասացեալ ի վերափոխման Աստուածածնայ եկեղեցւոյն Հայոց» և «Կոնդակ օրհնութեան», Վարդան Բարձրբերդցու «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» և այլն: 1800 թ. Արղուժյանի տպարանում լույս է ընծայվում «Թարգմանութիւն Պրիւէլէկացն Հայոց» գիրքը, սրանով էլ սահմանափակվում է 18-րդ դարում Ռուսաստանում տպագրված հայերեն գրքերի ցուցակը: Տպագրության դադարեցման հիմնական պատճառը Հովսեփ արք. Արղուժյանի Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելն էր և ապա նրա վախճանը: Հայկական տպագրությունը Ռուսաստանում ժամանակավորապես դադարեց: Միայն 1820 թ. Հովհաննես սարկ. Հովհաննիսյանը վերականգնեց այն և, տեղափոխելով Պետերբուրգ, նոր շրջան բացեց ռուսահայ տպագրական գործում: Բայց մինչ այդ, ինչպես վկայում է Սարգիս եպիսկոպոս Հասան Զալալյանը, «տպարանի Թանկագին իրերը հայոց եկեղեցու զանգակատանը արժանացած էին փրշուն կուլ գնալուն»¹⁹:

Г. Ф. АВЕТИСЯН — Начало армянского книгопечатания в России.— Зачинателем этого дела стал Григор Халдарян, издавший в течение 1781—88 гг. в Санкт-Петербурге 16 наименований армянских книг. Затем та же типография действовала в Новой Нахичевани и Астрахани, сделав большой вклад в просвещение в XVIII в.

¹⁸ Տե՛ս Պետրոս Քալանթարյան, Համառոտ բժշկարան, նոր նախիջևան, 1793, Յիշատակարան, էջ 135—136:

¹⁹ Լեօ, Յովսեփ կաթողիկոս Արղուժեան, էջ 202: